

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ (COVID-19) ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԵՐԿՐՆԵՐԻ «ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ»

ՀՀ-ի ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Կորոնավիրուսային վարակի հետ կապված արտակարգ դրությունից և կիրառվող ժամանակավոր սահմանափակումներից դուրս գալու համար Հիվանդությունների վերահսկման կենտրոնը[1] (այսուհետ՝ ՀՎԿ) որը ներկայացնում է ոլորտային ռազմավարությունը ԱՄՆ-ի և ողջ աշխարհի համար, առաջարկում է կիրառել երեք փուլային մոտեցումը՝ հիմնվելով որոշակի չափորոշիչների վրա:

Ի տարբերություն ՀՎԿ-ի առաջարկած մոտեցման՝ ՀՀ-ում մշակված չէ փուլային ռազմավարություն և արտակարգ դրության պայմաններում Հայաստանի ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների ու դրանք թուլացնելու վերաբերյալ կանոնները սահմանվում են ՀՀ Պարետի որոշումներով[2]:

ՀՎԿ-ն առաջարկում է բազային չափորոշիչներ, որոնք պետք է բավարարել նախքան փուլային բացմանն անցնելը: Դրանք են.

Ախտանիշներ	Դեպքեր	Հիվանդանոցներ
•14 օրվա ընթացքում գրանցված գրիպա-նման հիվանդությունների (ԳՆՀ) նվազող հետագիծ •14 օրվա ընթացքում գրանցված COVID-նման սիմպտոմատիկ դեպքերի նվազող հետագիծ	• 14 օրվա ընթացքում փաստաթղթավոր-վածդեպքերի նվազող հետագիծ • 14 օրվա ընթացքում ընդհանուր թեստերի քանակում դրական թեստերի տոկոսի նվազող հետագիծ (թեստերի անփոփոխ կամ ավելացող ծավալ)	• Բոլոր հիվանդների բուժումն առանց ինտենսիվ թերապիայի • Թեստավորման լայնածավալ ծրագիր ռիսկի խմբի բուժաշխատողների համար, այդ թվում՝ ձևավորվող հակամարմինների թեստավորում

ՀՀ-ում նմանատիպ չափորոշիչներ սահմանված չեն: Ս.թ. մայիսի 18-ից ՀՀ ողջ տարածքում ժամանակավորապես սահմանափակված տնտեսական գործունեության տեսակների դեպքում գործելու են բացառություններ՝ հստակ կանոններին հետևելու պայմանով: Ժամանակավորապես չսահմանափակված գործունեության տեսակներով արգելվում է զբաղվել սահմանված կանոններն ամբողջ ծավալով չպահպանելու դեպքում, իսկ կանոնները չպահպանելու դեպքում կիրառվում են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

---

[1] ՀՎԿ-ի մասին մանրամասն տե՛ս հետևյալ հղումով՝
https://www.cdc.gov/about/organization/cio.htm?CDC_AA_refVal=https%3A%2F%2Fwww.cdc.gov%2Fabout%2Forganization%2Findex.html

[2] Տե՛ս ՀՀ Պարետի 2020թ. Մայիս 14-ի թիվ 47 որոշումը

Այսպիսով, ՀՎԿ-ի առաջարկած «վերաբացման» եռափուլ մոտեցումը.

- **Վերջին տվյալների և պատրաստվածության վրա,**
- **Նվազեցնում է նոր բռնկման վտանգը,**
- **Պաշտպանում է ամենախոցելիներին,**
- **Ղեկավարի հայեցողությամբ կարող է իրականացվել ողջ պետության տարածքում կամ շրջան առ շրջան:**

Բացի վերը նշված չափորոշիչներից՝ ՀՎԿ-ն առաջարկում է վերաբացման յուրաքանչյուր փուլում անհատների, խոցելի խմբերի և գործատուների համար առանձին կանոններ: ՀՀ-ում Պարետի որոշմամբ վերաբացվող բոլոր ոլորտների համար սահմանվել են հստակ անվտանգության կանոններ, որոնցում առանձնացված են՝ աշխատանքի ընդհանուր կազմակերպման կանոններ, տարածքի ախտահանման կանոններ, անձնակազմի համար և հաճախորդների սպասարկման կանոններ:

Կանոններ անհատների և խոցելի խմբերի համար

ՀՎԿ

Շարունակել պահպանել պատշաճ հիգիենայի կանոնները

- Ձեռքերը լվանալ օճառով և ջրով կամ օգտվել ձեռքերի ախտահանիչից, հատկապես հաճախ օգտագործվող առարկաների կամ մակերեսների հետ շփումից հետո:
- Խուսափել դեմքին ձեռք տալուց:
- Հազալիս կամ փռշտալիս բերանը փակել անձեռոցիկով կամ արմունկով:
- Հնարավորինս ախտահանել հաճախակի օգտագործվող առարկաները և մակերեսները:
- Լուրջ վերաբերվել հասարակական վայրերում, մասնավորապես՝ տրանսպորտում դիմակ կրելու հարցին:

Հիվանդություն ունեցող անձինք՝

- **Պետք է մնան տանը**
- **Չպետք է հաճախեն դպրոց կամ աշխատավայր**

ՀՀ

- հանրային բաց տարածքներում դիմակի առկայությունը պարտադիր է

Ցամաքային ուղևորատար տրանսպորտի ոլորտում սահմանվել են առողջ և անվտանգ պայմանների ապահովման կանոնները:

- Հանրային տրանսպորտով երթևեկությունը թույլատրվելու է բացառապես անհատական պաշտպանության միջոցներով՝ դիմակով և ձեռնոցներով:
- Արգելվում է տրանսպորտային միջոցում կանգնած ուղևորների փոխադրումը, բացի 9 մետրից ավել երկարություն ունեցող տրանսպորտային միջոցների:
- Տրանսպորտային միջոցներում ուղևորների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել նստելու համար հատկացված տեղերի ընդհանուր թվաքանակին, ընդ որում արգելվում է հավելյալ ինքնաշեն նստատեղերի ավելացումը: 9 մետրից ավելի երկարություն ունեցող տրանսպորտային միջոցներում կանգնած ուղևորների միջև պահպանվում է առնվազն 1 մետր հեռավորություն:

ՀՎԿ

Առաջին փուլ

- ԽՈՑԵԼԻ ԲՈԼՈՐ ԱՆՀԱՏՆԵՐԸ պետք է շարունակեն մնալ իրենց տներում:
- ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ (օր.՝ այգիներում, հանգստի բացօթյա վայրերում, խանութներում) բոլոր անհատները պետք է պահպանեն միմյանցից առավելագույն հեռավորություն:
- Պետք է խուսափել սոցիալական հավաքներից, որոնց մասնակցում են 10-ից ավելի անհատներ և պատշաճ հեռավորության պահպանումը հնարավոր չէ՝ բացառությամբ, եթե իրականացվում են պատշտպանիչ միջոցառումներ:
- ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՀԱՍՑՆԵԼ ՈՉ ԿԵՆՍԱԿԱՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և հետևել ճամփորդությունից հետո մեկուսացման ՀՎԿ ցուցումներին:
-

Երկրորդ փուլ

- ԽՈՑԵԼԻ ԲՈԼՈՐ ԱՆՀԱՏՆԵՐԸ պետք է շարունակեն մնալ իրենց տներում:
- ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ (օր.՝ այգիներում, հանգստի բացօթյա վայրերում, խանութներում) բոլոր անհատները պետք է պահպանեն միմյանցից առավելագույն հեռավորություն:
- Պետք է խուսափել սոցիալական հավաքներից, որոնց մասնակցում են 50-ից ավելի անհատներ և պատշաճ հեռավորության պահպանումը հնարավոր չէ՝ բացառությամբ, եթե իրականացվում են պատշտպանիչ միջոցառումներ:

ՀՀ

- Հնարավորինս ձեռնպահ մնալ կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի աշխատողներին աշխատանքի ներգրավելուց: Բարձր ռիսկային խմբի մեջ ներառված են՝

ա. թույլ իմունային համակարգ ունեցող անձինք (օր.՝ քաղցկեղ),
բ. 65 և բարձր տարիքի անձինք,
գ. Քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք
դ. շաքարային դիաբետ ունեցող անձինք:

Արգելվում է սպասարկել սուր շնչառական վարակների ախտանշաններով՝ ջերմություն, հազ, հարբուխ, դժվարաշնչություն ունեցող այցելուներին

Առևտրի իրականացման վայրերում

- Արգելվում է հաճախորդների մուտքը տարածք առանց անհատական պաշտպանության միջոցների՝ դիմակի և ձեռնոցների:
- Անհրաժեշտ է բացառել մարդկանց կուտակումները, ապահովել մարդկանց մուտքի գործընթացի կառավարմանն ուղղված միջոցառումներ՝ սահմանափակելով մարդկանց մուտքը փակ տարածք:

ՀՎԿ

Երրորդ փուլ

- Խոցելի խմբում գտնվող անձանց թույլատրվում է մասնակցել հասարակական կյանքին, սակայն այստեղ ևս կարևոր է սոցիալական հեռավորության և վարակից խուսափելու համար անհրաժեշտ միջոցների պահպանումը:
- Ցածր ռիսկային խմբում գտնվող անձինք պետք է փորձեն հնարավորինս քիչ ժամանակ ծախսել մարդաշատ վայրերում:

Կանոններ գործատուների համար

ՀՎԿ

Բոլոր փուլերի համար

Քաղաքականություն մշակել հետևյալ ուղղություններով՝

- Սոցիալական հեռավորություն և պաշտպանական միջոցներ,
- Մարմնի ջերմության չափումներ,
- Թեստավորում, մեկուսացում և շփումների հետագծում
- Սանիտարական միջոցառումներ
- Ընդհանուր և բազմամարդ տարածքների օգտագործում և ախտահանում
- Գործնական ճամփորդություններ

Թույլ չտալ սիմպտոմատիկ անձանց ֆիզիկապես վերադառնալ աշխատավայր՝ առանց բշժկի թույլտվության:

ՀՎԿ	ՀՀ
Առաջին փուլ • Երբ հնարավոր է և գործնական բիզնեսի գործառնությունների առումով՝ շարունակել ԽՐԱԽՈՒՍԵԼ ՀԵՌԱՎԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ: • Եթե հնարավոր է՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՓՈՒԼԵՐՈՎ: • Փակել ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ, որտեղ սիրում են հավաքվել և շփվել աշխատողները կամ հարկադրել սոցիալական հեռավորության խիստ կանոններ: • ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՀԱՍՑՆԵԼ ՈՉ ԿԵՆՍԱԿԱՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և հետևել ճամփորդությունից հետո մեկուսացման ՀՎԿ ցուցումներին: • Լրջորեն դիտարկել ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ անդամ հանդիսացող աշխատակիցների համար ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ ապահովելու հարցը: **Առանձին ոլորտներ՝** • Դպրոցները և երիտասարդների կազմակերպված գործունեության վայրերը (Ցերեկային խնամքի կենտրոններ, ճամբարներ) շարունակում են փակ մնալ: • Ծերանոցներ և հիվանդանոցներ այցելությունները արգելվում են: Խնամքն իրականացնողները պետք է պահպանեն հիգիենայի կանոնները:	• ՀՀ-ում մայիսի 18-ից, **անվտանգության կանոնների պահպանմանբ** վերսկսվելու են՝ - բարերի, սրճարանների գործունեությունը, - գարեջրատների, պանդոկների գործունեությունը, - շարժական կետերից խմիչքների, ըմպելիքների վաճառքը, - բարերի և խմիչքների մատուցման ծառայությունները - թանգարանների գործունեությունը՝ բացառապես բնության և պատմաճարտարապետական համալիրներից բաղկացած արգելոց-թանգարանների, - ճարտարապետության և մոնումենտալ արվեստի հուշարձանթանգարանների, տեսարժան վայրերին կից մշտական գործող ցուցասրահների և ցուցադրումների գործունեության մասով, - բուսաբանական և կենդանաբանական այգիների ու բնության հատուկ պահպանվող տարածքների, արգելոցների գործունեությունը, - զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեությունը՝ բացառապես բացօթյա տարածքներում զվարճությունների կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորանքի վարձույթի մասով, - եկեղեցիներում, վանքերում, մզկիթներում, սինագոգներում և այլ պաշտամունքի վայրերում իրականացվող կրոնական ծիսական արարողությունները՝ ոչ ավելի, քան 5 հոգու մասնակցությամբ, կրոնական ծեսերի (հոգեհանգստի և այլնի) կատարման ծառայությունները՝ ոչ ավելի, քան 5 հոգու մասնակցությամբ, - քաղաքական կազմակերպությունների գործունեությունը:

- ԽՈՇՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ (հանրային սննդի օբյեկտները, կինոթատրոնները, մարզական օբյեկտները, կրոնական պաշտամունքի վայրերը) կարող են աշխատել ֆիզիկական հեռավորության խիստ կանոններով:
- Ուղեցույցերին հետևող արտահիվանդանոցային հաստատություններում կարող են վերսկսվել ՊԼԱՆԱՅԻՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ըստ կլինիկական ցուցումների:
- ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃՆԵՐԸ կարող են վերաբացվել, եթե պահպանեն ֆիզիկական հեռավորության և սանիտարահիգիենիկ խիստ կանոններ:
- ԲԱՐԵՐԸ պետք է փակ մնան:

Երկրորդ փուլ

- Հնարավորության դեպքում շարունակել խրախուսել հեռավար աշխատանքը:
- Փակել ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ, որտեղ սիրում են հավաքվել և շփվել աշխատողները կամ հարկադրել սոցիալական հեռավորության խիստ կանոններ:
- Կարելի է սկսել ոչ կենսական ճանփորդությունները
- Լրջորեն վերաբերվել Խոցելի խմբերի անդամ հանդիսացող աշխատակիցների համար հատուկ պայմաններ ստեղծելու հարցին:

Առանձին ոլորտներ՝

- Դպրոցները և երիտասարդների կազմակերպված գործունեության վայրերը (Ցերեկային խնամքի կենտրոններ, ճամբարներ) կարող են վերաբացվել:

- Իրենց գործունեությունն են վերսկսելու նաև նախակրթարանները. որոշումը սահմանում է նախակրթարաններում աշխատանքի վերսկսման հետ կապված բոլոր անհրաժեշտ կանոնները: Միևնույն ժամանակ դպրոցական և համալսարանական կրթությունը կշարունակվի իրականացվել հեռավար տարբերակով:
- Սահմանվում են տարբեր ոլորտներում իրականացվող աշխատանքների կազմակերպման համար կանոնները՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, փակ արտադրական տարածքում տնտեսական գործունեության իրականացման ընթացքում, գրասենյակային պայմաններում տնտեսական գործունեություն ծավալելու ընթացքում, շինարարական հրապարակներում, առևտրի իրականացման վայրերում, մեծածախ և մանրածախ առևտրի օբյեկտներում, ծառայությունների ոլորտում հաճախորդների սպասարկման օբյեկտներում, հանրային սննդի օբյեկտներում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում և այլ ոլորտներում:
- Յուրաքանչյուր ոլորտի համար սահմանվում է աշխատանքի կազմակերպման ընդհանուր կանոնները, աշխատողների համար կանոններ և այցելու/հաճախորդների համար կանոններ:
- Հնարավոր բոլոր դեպքերում աշխատանքն իրականացվում է հեռավար/առցանց եղանակով՝ միաժամանակ ապահովելով մարմնի գործառույթների

- Ծերանոցներ և հիվանդանոցներ այցելությունները արգելվում են: Խնամքն իրականացնողները պետք է պահպանեն հիգիենայի կանոնները:
- ԽՈՇՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ (հանրային սննդի օբյեկտները, կինոթատրոնները, մարզական օբյեկտները, կրոնական պաշտամունքի վայրերը) կարող են աշխատել ֆիզիկական հեռավորության խիստ կանոններով:
- Արտահիվանդանոցային հաստատություններում կարող են վերսկսվել ՊԼԱՆԱՅԻՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ըստ կլինիկական ցուցումների:
- ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃՆԵՐԸ կարող են բաց մնալ, եթե պահպանեն ֆիզիկական հեռավորության և սանիտարահիգիենիկ խիստ կանոններ:
- ԲԱՐԵՐԸ կարող են աշխատել՝ հնարավորության դեպքում և հավուր պատշաճի սահմանափակելով կանգնելու տեղերը:

Երրորդ փուլ

- Վերսկսել աշխատավայրերի ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ:

Առանձին ոլորտներ՝

- Կարելի է վերսկսել այցերը հիվանդանոցներ և ծերանոցներ՝ հետևելով հիգիենայի կանոններին:
- ԽՈՇՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ (հանրային սննդի օբյեկտները, կինոթատրոնները, մարզական օբյեկտները, կրոնական պաշտամունքի վայրերը) կարող են աշխատել սահմանափակ ֆիզիկական հեռավորության կանոններով:
- ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃՆԵՐԸ կարող են բաց մնալ, եթե պահպանեն սանիտարահիգիենիկ պայմանները:
- Բարերի գործունեությունը կարող է իրականացվել ավելի ընդլայնված տարածքում:

- Հնարավոր բոլոր դեպքերում պետք է սահմանել հերթափոխային աշխատանք:
- Պետք է հնարավորինս բացառել ներգնա և արտագնա գործուղումները, հատկապես բազմամարդ միջոցառումների նպատակով, իսկ դրա անխուսափելիության դեպքում՝ առավելագույնս սահմանափակվում են գործուղման ընթացքում հանդիպումներն ու շփումների շրջանակը:
- Սահմանափակվում է այցելուների մուտքը բժշկական հաստատությունների բաժանմունք, իսկ այցելության անհրաժեշտության դեպքում այցելուներն ապահովվում են մեկանգամյա օգտագործման բժշկական դիմակով, և հսկողություն է սահմավնում վերջիններիս կողմից իրենց ձեռքերի ախտահանման նկատմամբ: Պացիենտի հետ շփումից առաջ և հետո, պացիենտի խնամքի ընթացքում բուժանձնակազմն իրականացնում է ձեռքերի պատշաճ ախտահանում՝ ալկոհոլային հիմքով հականեխիչ միջոցներով:
- ***ՀՀ Պարեպի թիվ 47 որոշմամբ անդրադարձ չի կատարվում տարեցների խնամքի կենտրոններում այցելություններին:***
- Հնարավորինս ձեռնպահ մնալ կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի աշխատողներին աշխատանքի ներգրավելուց:
- ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃՆԵՐԸ կարող են բաց մնալ, եթե պահպանեն ֆիզիկական հեռավորության և սանիտարահիգիենիկ խիստ կանոններ: Աշխատակիցների և այցելուների մուտքը մարմնամարզական օբյեկտ թույլատրվում է բացառապես դիմակներով և պաշտպանիչ ձեռնոցներով:

Կորոնավիրուսի թեստավորում

ՀՎԿ առաջարկում է կորոնավիրուսի թեստավորման 3 տարբերակ[3].

1. Վիրուսի առկայության թեստ

Եթե պատասխանը դրական է, առաջարկվում է մնալ տանը և հիվանդ լինելու դեպքում հետևել ՀՎԿ-ի ուղեցույցով տրվող քայլերին:

Եթե պատասխանը բացասական է, սակայն առկա են ախտանշաններ, անհրաժեշտ է վերահսկել ախտանշանները, բժշկի խորհրդով մնալ տանը և անհրաժեշտության դեպքում կրկին հետազոտվել կորոնավիրուսի նկատմամբ:

Այն դեպքում, երբ պատասխանը բացասական է և ախտանշանները բացակայում են, անձը կարող է կրկնակի հետազոտվել միայն բժշկի կամ գործատուի պահանջով:

2. Հակամարմինների նկատմամբ հետազոտություն

Եթե հետազոտության պատասխանը դրական է, նշանակում է, որ անձն ունեցել է կորոնավիրուս և պաշտպանված է կրկնակի վարակումից՝ իմունիտետ է ձեռք բերել, բայց սա հստակ չէ, քանի որ այս ուղղությամբ դեռ ուսումնասիրությունները շարունակվում են: ***Անհրաժեշտ է հետևել սեփական և ուրիշների առողջության պահպանմանը***:

Եթե պատասխանը բացասական է, նշանակում է, որ անձն երբեք վարակված չի եղել կորոնավիրուսով կամ դեռևս վիրուսի նկատմամբ հակամարմիններ չեն ձևավորվել: Այս դեպքում չի բացառվում, որ անձը դեռ կարող է վարակվել կորոնավիրուսով, ուստի ***պետք է հետևի սեփական և ուրիշների առողջության պահպանման կանոններին:***

[3] Տե՛ս https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2020/05/Testing-Guidance.pdf

3. Կիրառել կորոնավիրուսի նկատմամբ թեստավորման երկու տարբերակներն էլ

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2020թ.-ի հունվարի 31-ի թիվ 336-Ա հրամանի[4]՝

Կասկածելի դեպքի բնորոշմանը համապատասխանող պացիենտները պարտադիր հետազոտվում են պոլիմերազային շղթայական մեթոդաբանությամբ (ՊՇՌ) վիրուսային ինֆեկցիան հայտնաբերելու նպատակով:

- ✓ Կորոնավիրուսային վարակով պայմանավորված դեպքերը մեկուսացվում են և խնամքն իրականացվում է հիվանդանոցային պայմաններում:
- ✓ Այնուամենայնիվ, հիվանդության մեղմ ընթացքի դեպքում պացիենտի խնամքը կարող է իրականացվել տան պայմաններում՝ կլինիկական դիտողություններից ելնելով:

Այսինքն՝ ՀՀ-ում դեռևս գործում է հետևյալ ալգորիթմը՝ հայտնաբերել-թեստավորել-մեկուսացնել և բուժել-կոնտակտային օղակը բացահայտել:

Այլ նկատառումներ

- ՀՀ-ում կորոնավիրուսի դեմ պայքարի շրջանակներում դեռևս մշակված չէ հաղորդակցման ռազմավարություն: Հանրության համար վիրուսի կանխարգելման, թեստավորման և տան պայմաններում բուժման ու խնամքի կազմակերպման վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի չէ՝ բնակչության տարբեր խմբերի առանձնահատկությունները հաշվի առնելով:

---

[4] Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարի 2020թ.-ի հունվարի 31-ի թիվ 336-Ա հրաման, կետ 40. https://ncdc.am/wp-content/uploads/2019/10/1_1.pdf